ԾՆՈՂՆԵՐԻ ԴԵՐԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄՈՏԻՎԱՑԻԱՅԻ ԽԹԱՆՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Ուսուցումը գիտակցական և կանխամտածված ակտիվություն, ուշադրություն և ջանքեր պահանջող գործընթաց է, որն իրականացնելու համար խիստ էական է ուսումնական մոտիվացիան: Աշակերտների ուսումնական մոտիվացիայի խթանման հարցում մեծ է ոչ միայն ուսուցիչների, այլ նաև ծնողների դերը:

Քննարկենք, թե ինչ կարող են անել ծնողները իրենց երեխաների ուսումնական մոտիվացիան խթանելու համար: Այսպես, ծնողները կարող են.

1. օգնել երեխային տեսնել ուսուցանվող առարկաների կապն իր առօրյա կյանքի հետ: Օրինակ՝ դեղատուն այցելելիս դեղորայք ստեղծելու հարցում քիմիայի կարևորության մասին խոսելն ավելորդ չի լինի:
2. կապել ուսուցանվող առարկաները երեխայի նախասիրությունների և հետաքրքրությունների հետ:
3. ըստ անհրաժեշտության, աջակցել երեխային ուսումնական նյութի յուրացման, տնային առաջադրանքների կատարման հարցում:
4. խրախուսել երեխայի ձեռքբերումներն ու առաջընթացը՝ խուսափելով արտաքին խթանիչների (մոտիվատորների) միջոցով ուսումնառությունը խթանելուց, քանի որ արտաքին մոտիվները արժեզրկում են երեխայի ներքին մոտիվները: Կարևոր է երեխաներին ցույց տալ, որ սովորելն օգտակար ու հետաքրքիր է: Մինչդեռ, երբ մենք ասում ենք, որ երեխան գումար կստանա բարձր գնահատականի համար, մենք արժեզրկում ենք ուսման կարևորությունն ու հետաքրքրությունը:
5. խուսափել երեխային այլ աշակերտների հետ համեմատելուց: Դրա փոխարեն օգնել երեխային տեսնել իր հմտությունների աճը նախկինի համեմատ: Օրինակ՝ «Այսօր դու ավելի արագ լուծեցիր խնդիրը, քան նախորդ շաբաթ»:
6. ավելի շատ կարևորել բովանդակությունը, երեխայի գիտելիքը, այն, թե ինչ է իմացել ու սովորել դպրոցում, քան գնահատականը: Գնահատականները երբեմն սուբյեկտիվ բնույթ են կրում և ոչ միշտ են արտացոլում երեխայի գիտելիքների մակարդակը, մինչդեռ երեխայի սովորածն իր հետ է մնում ողջ կյանքի ընթացքում:
7. ցույց տալ, որ սխալվելն ու ձախողվելը ևս ուսումնական գործընթացի մի մասն են կազմում: Կարևոր է ոչ թե հուսահատվել դրանց պատճառով, այլ դասեր քաղել այդ սխալներից ու առաջ շարժվել:
8. խուսափել երեխայի ներկայությամբ դպրոցի կամ ուսուցչի մասին բացասական դիտարկումներ անելուց: Երեխան պետք է զգա, որ ծնողը վստահում է դպրոցին ու դպրոցական անձնակազմին:
9. օրինակ ծառայել երեխայի համար: Երբ երեխան տեսնում է, որ իր ծնողները ևս շարունակում են ինչ-որ բան սովորել, ընթերցել և այլն, իր համար ևս ուսումնական գործընթացում ներգրավվելն առավել հեշտ է դառնում:
10. երեխայի առջև դնել կարճ և հասանելի նպատակներ: Երբ երեխան հասնի իր նպատակին, խրախուսանքի միջոցով մենք կարող ենք նպաստել, որ նա անցնի հաջորդ քայլին ու նոր առաջընթաց գրանցի:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: